Նունե Էլիզբարյան, *հայցորդ*
ՀՊՏՀ

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Գոյություն ունեն տարածքային տնտեսությունների մրցունակության ապահովման տարբեր հայեցակարգեր, որոնց շարքում տեսական և գործնական հիմնավորվածության ու կիրառելիության տեսանկյունից կարելի է առանձնացնել կլաստերային մոտեցման կիրառումը: Միջազգային փորձը վկայում է, որ կլաստերային մոտեցումն ամբողջ աշխարհում ընդունված է որպես տարածքային տնտեսությունների մրցունակության բարձրացման արդյունավետ քաղաքականության հիմք: Կլաստերների ձևավորման և գործարկման հաջողված օրինակներ կան ԱՄՆ-ում, Ֆինլանդիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ճապոնիայում, Ֆրանսիայում և մի շարք այլ երկրներում:

Կլաստերային մոտեցման ձևավորման համար պատմական հիմք են հանդիսացել, մի կողմից, Ա. Մարշալի «արդյունաբերական շրջան» և «ագլոմերացիաների տնտեսություն» գաղափարները, մյուս կողմից՝ Յո. Շումպետերի ինովացիաները, որոնք դիտարկվում էին որպես ռեգիոնալ ագլոմերացիաների ներսում տնտեսական աճին նպաստող առանցքային գործոններ[1]: Այսպիսով, Մարշալի և Շումպետերի տեսությունների հիմնադրույթների համակցման արդյունքում ի հայտ է գալիս կլաստերի շրջանակներում ֆիրմաների գործունեության համակցման գաղափարը, որը ենթադրում է մի կողմից, կապակցված ֆիրմաների մոտիկ հարևանության հաշվին ծախսերի նվազեցում և մյուս կողմից, ինովացիաների տարածքում մեկ ֆիրմայից դեպի մյուսը, որն ապահովում է կլաստերի ներսում արտադրողականության անընդհատ աճ[2]:

Կլաստերային հայեցակարգի նկատմամբ ներկայիս հետաքրքրությունը մեծապես պայմանավորված է Մայքլ Պորտերի աշխատանքներով[3]: Նրա բնորոշմամբ, կլաստերն իրենից ներկա-

---

[1] Наролина, Т. С. Формирование и развитие 8. кластеров как механизм обеспечения конкурентоспособности экономики региона: автореф. дис. … канд. экон. наук. / Т. С. Наролина. Воронеж, 2007. С. 4.

[2] Andre Torre, Frederic Wallet, European Planning Studies, Vol 23, P. 650- 277, 16 februaury, 2015

[3] Портер М. Конкуренция.: Пер. с англ..: – М.: Издательский дом «Вильямс», 2005. – 608 с.

յացնում է փոխկապված, աշխարհագրական տեսանկյունից հարևան հանդիսացող ընկերությունների և նրանց հետ կապված կազմակերպությունների այնպիսի խումբ, որի մասնակիցները գործում են որոշակի ոլորտում և բնութագրվում են գործունեության ընդհանրությամբ ու փոխադարձ լրացնողականությամբ:

• Տարածքային տնտեսություններում կլաստերների ձևավորման և զարգացման գործում կարևոր դերակատարություն ունի պետությունը: Զարգացած տնտեսությամբ երկրներում կլաստերային մոտեցման կիրառմամբ տարածքային զարգացման քաղաքականությունը կառուցվում է հետևյալ կետերի շուրջ .

• կլաստերներին պետական աջակցության հիմնական մեխանիզմի ընտրությունը (կլաստերի գործարկման պայմանների ստեղծում կամ անմիջական աջակցության ցուցաբերում),

• պետական միջոցների ստացմանը հավակնող կլաստերների շրջանակի ընտրությունը (հնարավոր է ինչպես տարածքային կլաստերների լայն շրջանակի, այնպես էլ սահմանափակ թվով առաջատար կլաստերների ընտրությունը),

• կլաստերների աջակցության հիմնական նպատակի հստակեցումը (աշխատատեղերի ստեղծում, նոր տեխնոլոգիաների մշակում և այլն)[4]:

Եվրոմիության երկրներում կլաստերների աջակցության ծրագրերը զարգանում են տարածքային, գիտության և տեխնոլոգիաների զարգացման, ինչպես նաև արդյունաբերական քաղաքականությունների շրջանակներում: Այսպիսի ծրագրերի զարգացման միտումը ցույց է տալիս, որ կլաստերները ԵՄ-ում հանդիսանում են տարածքային, գիտական և արդյունաբերական զարգացման հիմնական գերակայություններից մեկը: Այստեղ տարածքային կլաստերային նախաձեռնությունները հիմնականում կենտրոնացված են արդյունաբերական վերակառուցման, ինչպես նաև զարգացման կենտրոններից հեռու գտնվող և ճգնաժամ ապրող տարածքներում: Ըստ որում, կլաստերների ստեղծման նախաձեռնությունների մոտ 1/3-ը արվում է պետության կողմից (ըստ որում պետությունը ֆինանսավորում է կլաստերային նախաձեռնությունների 54%-ը), 27%-ը՝ գործարար հանրույթը (ֆինանսավորման 18%-ը), իսկ 35% դեպքերում կլաստերները ստեղծվում են պետության և բիզնեսի համատեղ նախաձեռ-

---

Наролина, Т. С. Формирование и развитие 8. кластеров как механизм обеспечения конкурентоспособности экономики региона : автореф. дис. … канд. экон. наук. / Т. С. Наролина. Воронеж, 2007. С. 4.

[4] Портер М. Конкуренция.: Пер. с англ..: – М.: Издательский дом «Вильямс», 2005. – 608 с.

նության արդյունքում (ֆինանսավորման 25%-ը)[5]: Վերլուծելով կլաստերների ձևավորման և զարգացման միջազգային փորձը, կարելի է եզրակացություն անել այն մասին, որ արդյունավետ կերպով զարգանում են հենց այն երկրները և տարածաշրջանները, որոնք իրագործում են կլաստերային ռազմավարություններ, ինչը, իր հերթին, ապահովում է տնտեսական համակարգերի մրցունակությունը և կլաստերներ է ներգրավում լրացուցիչ ներդրումներ:

Հատկանշական է, տարածքային տնտեսություններում կլաստերների աջակցության ծրագրերը, իրենց առավելությունների հետ միասին, պարունակում են նաև նշանակալի ռիսկեր, որոնք պետք է անպայմանորեն հաշվի առնվեն նմանատիպ ծրագրերի մշակման և իրագործման ընթացքում: Այսպես, կլաստերային մոտեցմամբ տարածքային տնտեսությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը կարող է բերել տարածքային տնտեսությունների ոչ բավարար դիվերսիֆիկացմանը, այս կամ այն հատվածներում արվող երկարաժամկետ ներդրումները կարող են հանգեցնել գերակայությունների փոփոխման անհնարինության խնդրին, ինչպես նաև տարածքային տնտեսությունը ամբողջությամբ կարող է կախվածության մեջ հայտնվել կլաստերի «միջուկը» կազմող ընկերությունից: Ընդհանուր առմամբ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ներկայումս զարգացած, ինչպես նաև զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների մեծ մասում կլաստերային մոտեցման կիրառումը հանդիսանում է տարածքային տնտեսության զարգացման քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Այս համատեքստում, ՀՀ-ում տարածքային տնտեսությունների մրցունակության բարձրացում և ինովացիոն բաղկացուցիչի ակտիվ կիրառում նախատեսող զարգացման արդյունավետ պետական քաղաքականության մշակման և կենսագործման համար կարևոր նշանակություն ունի կլաստերային մոտեցման հիման վրա տարածքային տնտեսությունների զարգացման քաղաքականության իրականացման միջազգային փորձի վերլուծությունը և արդյունքների տեղայնացումը: Որոշելու համար գործունեության այն տեսակները, որտեղ հնարավոր է կլաստերների ստեղծումը, անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանների կլաստերացման ներուժի գնահատում: Տարածաշրջանի կլաստերացման ներուժ ասելով հասկացվում է տարածաշրջանում գտնվող ճյուղերի, ձեռնարկությունների և ենթակառուցվածքային

[5] Andre Torre, Frederic Wallet, European Planning Studies, Vol 23, P. 650-277, 16 february, 2015

կազմակերպությունների մրցակցային առավելությունների առկայությունը, այդ առավելությունների միավորման հնարավորությունը և տարածաշրջանի մրցունակության բարձրացման նպատակով դրանց օգտագործման հնարավորությունը: Տնտեսության ճյուղերը հանդես են գալիս որպես շուկայական մասնագիտացման հատվածներ, և դրանցում արդեն առկան են կլաստերներ, կամ էլ դրանց ստեղծումը հնարավոր է դիտվում, եթե մասնագիտացման և շնչային թողարկման գործակիցները մեծ կամ հավասար են 1-ի: Այսպես, մասնագիտացման գործակցի 1,5-ից բարձր արժեքը նշանակում է, որ տվյալ կլաստերը հանդիսանում է (կամ կհանդիսանա) արտահանման կողմնորոշում ունեցող կամ էլ ուղղված է ամբողջ երկրի ներսում պահանջմունքների բավարարմանը: Եթե մասնագիտացման գործակիցը գտնվում է [1;1,5] միջակայքում, ապա կլաստերը նպատակահարմար է դասել տարածաշրջանային թվին[6]: Դիտարկվող գործակիցների դրական շարժընթացը ցույց է տալիս ճյուղի և տարածաշրջանի կլաստերացման ներուժային հնարավորությունների առկայությունը կամ էլ կլաստերի հետագա աճի հնարավորությունը: Գործակիցների նվազումը վկայում է թողարկվող արտադրանքի տեսականու ընդլայնման, արտադրության արդիականացման անհրաժեշտության կամ ճյուղի՝ որպես կլաստեր ապագայում անհեռանակարային լինելու մասին:

Կլաստերացման ներուժի բնութագրիչները դիտարկելով մասնավորապես Տավուշի մարզի համար, կարող են եզրակացություն ձևակերպել առ այն, որ մարզում կլաստերացման ներուժը գտնվում է միջին մակարդակի վրա, ինչը ենթադրում է մարզում 2-3 կլաստերների ձևավորման հնարավորություն: Ըստ որում, այստեղ կլաստերային կառուցվածքների մրցունակության որոշիչներից առկա են միայն երկուսը՝ գործոնային պայմանները (ինչը ենթադրում է նախևառաջ գյուղատնտեսության վարման և զբոսաշրջության համար նպաստավոր բնակլիմայական պայմանների առկայություն) և պահանջարկի պայմանները: Ինչպես արդեն վերևում նշվեց, մարզում թերզարգացած են կլաստերների ձևավորման և գործարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, սակայն դրանք կարող են ստեղծվել ոչ մեծ ներդրումների պարագայում, ինչում կարելի է համոզվել՝ ուսումնասիրելով Տավուշի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված ենթակառուցվածքների զարգացման միջոցառումների և դրանց կենսագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պահանջարկի ցանկը:

---

[6] Ն.Ա. Էլիզբարյան, Զբոսաշրջության տարածքային հիմնախնդիրները ՀՀ նյութերով, էջ 95-110

Մեր կարծիքով, Տավուշի մարզի զարգացման գերակա ուղղություն է հանդիսանում զբոսաշրջության ոլորտում կլաստերի ձևավորումը և զարգացումը: Եվ չնայած այն հանգամանքին, որ մարզում զբոսաշրջության զարգացումը բնութագրող առանձին ցուցանիշները, ինչպես, օրինակ, զբոսաշրջային ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների ծավալը, գտնվում են խիստ ցածր մակարդակի վրա, սակայն նկատելի է Տավուշի մարզում մատուցվող ծառայությունների ընդհանուր կառուցվածքում զբոսաշրջային ծառայությունների տեսակարար կշռի ավելացման միտումը (տե՛ս աղյուսակ 2): Ըստ որում, ծառայությունների ոլորտում հյուրանոցային և ռեստորանային սպասարկման մասնագիտացման գործակիցը 2013թ-ի տվյալներով ստացվել է 1.5-ից բարձր, ընդ որում՝ ամենաբարձրը հանրապետությունում, ինչը կարելի է համարել մարզում զբոսաշրջային կլաստերացման ներուժի առկայության ևս մեկ կարևոր վկայություն:

Աղյուսակ 2

Ծառայությունների ոլորտում հյուրանոցային և ռեստորանային սպասարկման մասնագիտացման գործակիցը ՀՀ մարզերում և Երևանում

	2010	2011	2012	2013
Երևան	1,09	0,99	0,99	0.99
Արագածոտն	2,16	1,54	1,43	1.41
Արարատ	0,37	0,90	1,00	0.98
Արմավիր	0,78	0,21	0,53	0.47
Գեղարքունիք	0,45	0,92	0,61	0.63
Լոռի	0,34	0,57	0,62	0.61
Կոտայք	1,35	2,65	2,03	1.95
Շիրակ	0,35	0,86	0,92	0.89
Սյունիք	0,34	1,39	1,35	1.34
Վայոց Ձոր	1,75	0,74	1,06	0.97
Տավուշ	0,42	1,21	1,52	1.51

Զբոսաշրջային կլաստերի հայեցակարգը երկրի, տարածաշրջանի, համայնքի տնտեսության դիտարկման նոր միջոց է, ինչպես նաև այն ցույց է տալիս մրցունակության բարձրացման ձգտող ձեռնարկությունների, իշխանության մարմինների և այլ կազմակերպությունների նոր դերը, որը հիմնված է զբուսաշրջային կլաստերի մասնակիցների միջև նոր փոխհարաբերությունների և փոխկապվածության վրա: Զբոսաշրջային կլաստերի աշխարհագրական մասշտաբները կարող են խիստ տարբեր լինել՝ մեկ համայնքից

կամ մեկ տարածաշրջանից մինչև ամբողջ երկրի տարածքը և նույնիսկ հարևան երկրները: Զբոսաշրջային կլաստերը կարող է տարբեր ձևեր ընդունել՝ կախված իր խորությունից և բարդությունից, սակայն դեպքերի մեծամասնությունում այն ներառում է զբոսաշրջային ընկերությունները, արտադրության գործոնների և ծառայությունների մատակարարները, ֆինանսական ինստիտուտները, հարակից ճյուղերի և ոլորտների ձեռնարկությունները:

Զբոսաշրջային կլաստերում պետք է ներառվեն նաև իրացման գործառույթներ իրականացնող, սպառողների հետ աշխատող ձեռնարկությունները, կառավարական և այլ կազմակերպությունները, որոնք ապահովում են հատուկ ուսուցում, կրթություն, տեղեկատվության, ինովացիաների ստացում, ինչպես նաև տրամադրում են տեխնիկական աջակցություն: Բացի այդ, զբոսաշրջային կլաստերը կարող է ներառել զբոսաշրջային ընկերությունների ասոցիացիաներ և մասնավոր հատվածի այլ համատեղ կառուցվածքներ, որոնց հիմնական գործառույթը կլաստերի մասնակիցներին առանձին ուղղություններում աջակցելն է: Ընդհանուր դեպքում, զբոսաշրջային կլաստերը կարելի է ներկայացնել հետևյալ գծանկարի միջոցով (գծանկար 1):

Տավուշի մարզում զբոսաշրջային կլաստերի ձևավորումը և զարգացումը ՀՀ տարածքային զարգացման քաղաքականության գերակայություններից մեկը պետք է համարել: Անհրաժեշտ է մշակել համապատասխան հայեցակարգ, ծրագիր, միջոցառումների համակարգ: Կարևոր նշանակություն ունի նաև Տավուշի մարզում զբոսաշրջային կլաստերի ձևավորման և զարգացման գործընթացն ապահովող հանրայինկառավարման մարմիններին վերապահվելիք գործառույթների շրջանակի հստակեցումը, կառավարման տարբեր մակարդակների իրավասություններից բխող պարտականությունների տարանջատումը և հստակեցումը:

Վերը նշված խնդիրների լուծման նպատակով մեր կողմից ներկայացվել են Տավուշի մարզում զբոսաշրջային կլաստերի ձևավորման քաղաքականության հայեցակարգային և ծրագրային հիմնարույթները, ինչպես նաև փորձ է արվել հստակեցնել հանրային կառավարման տարբեր մակարդակների մարմինների և այլ հանրային կառույցների իրականացվելիք քայլերը, որոնք անհրաժեշտ են ընդհանուր նպատակի իրագործումն ապահովելու համար:

Տավուշի մարզում զբոսաշրջային կլաստերի ձևավորման և զարգացման քաղաքականության բնագավառում ՀՀ կառավարության հիմնական խնդիրը մարզում կլաստերային նախաձեռնությունների ստեղծման և իրագործման խթանումն ու աջակցությունն

է: Վերջինս իրագործելու համար հանրապետության կառավարությունը, իր իրավասության շրջանակներում, պետք է իրականացնի հետևյալ գործառույթները.

Գծանկար 1.

Զբոսաշրջային կլաստերի սխեմա[7]

Զբոսաշրջային ծառայությունների առաջարկ համաշխարհային զբոսաշրջային կենտրոնների կողմից



- զբոսաշրջային կլաստերային քաղաքականության իրագործման տեղեկատվական-վերլուծական աջակցություն,
- զբոսաշրջային կլաստեր(ներ)ի զարգացման քաղաքականության ընդհանուր ռազմավարության մշակում, որը պետք է ներառի քաղաքականության շարժառիթները, նպատակները, խնդիրները և ուղղությունները,
- մարզում ձևավորվող զբոսաշրջային կլաստերային նախաձեռնությունների իրագործման համար տնտեսական քաղա-

[7] Andre Torre, Frederic Wallet, European Planning Studies, Vol 23, P. 650- 277, 16 februaury, 2015

քականության առկա գործիքների և միջոցառումների օգտագործում,
- ՀՀ տարածքային տնտեսական և սոցիալական զարգացման համար պատասխանատու նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների գործունեության մեջ կլաստերային քաղաքականության սկզբունքների ինտեգրում,
- մարզի և տարածաշրջանների մակարդակում զբոսաշրջային կլաստերների զարգացման նախաձեռնությունների մրցութային աջակցություն,
- զբոսաշրջային կլաստերների ձևավորման և զարգացման քաղաքականության ոլորտում միջազգային համագործակցության զարգացմանն աջակցություն:

АННОТАЦИЯ

Нуне Элизбарян, *соискатель*
АГЭУ

ВЛИЯНИЕ ТУРИСТИЧЕСКОГО КЛАСТЕРА НА КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬ РЕГИОНАЛЬНОЙ ЭКОНОМИКИ

Есть разные понятия, обеспечивающие конкурентоспособность региональных экономик, включая действия и применимости теоретической и практической точки зрения может быть отдельный кластерный подход. Международный опыт показывает, что кластерный подход принят во всем мире как эффективной политики повышения конкурентоспособности региональных экономик, основанных. Формирование кластера успешные примеры в Соединенных Штатах, Финляндии, Германии, Италии, Японии, Франции и ряде других стран

ANNOTATION

Nune Elizbaryan, *Researcher*
ASUE

TOURISM CLUSTER IMPACT ON THE COMPETITIVENESS OF THE REGIONAL ECONOMY

There are different concepts ensuring competitiveness of regional economies including the validity and applicability of theoretical and practical perspective can be separate the cluster approach. International experience shows that the cluster approach is accepted worldwide as an effective policy to increase the competitiveness of regional economies based. Cluster formation successful examples are in the United States, Finland, Germany, Italy, Japan, France and several other countries.